ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 94

06 դեկտեմբերի 2019 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ «ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ «ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ և ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՕՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 118-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից Սառնաղբյուր համայնքում իրականացված «Խմելու ջրի ջրամատակարարման ցանցի վերանորոգման և արդիականացման» ծրագրի նախագծային փաստաթղթերը,

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է</u>

1. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից Սառնաղբյուր բնակավայրում իրականացված «Խմելու ջրի ջրամատակարարման ցանցի վերանորոգման և

արդիականացման» ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով կառուցված խմելու ջրի օրական կարգավորման ջրամբարների կառավարման հանգույցների (N N 2, 3, 5) պահպանման ու սպասարկման համար անհատույց (մշտական) օգտագործման նպատակով տրամադրել.

ա) N 2 հանգույցի համար (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մար Անի համայնք Սառնաղբյուր բնակավայր, 6րդ փողոց, 6-րդ նրբանցք, թիվ 7)՝ համայնքի սեփականությունը համարվող բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողերի գործառնական նշանակության 08-100-0099 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող 0.03040 հեկտար հողամաս.

բ) N 3 հանգույցի համար (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք Սառնաղբյուր բնակավայր, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, թիվ 10/1)՝ համայնքի սեփականությունը համարվող բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 08-100-0012 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող 0.02065 հեկտար հողամաս.

գ) N 5 հանգույցի համար (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք Սառնաղբյուր բնակավայր, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, թիվ 111)՝ համայնքի սեփականությունը համարվող գյուղատնտեսական նշանակության արոտ հողատեսքի 08-100-00404 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող 0.035670 հեկտար մակերեսներով հողամաս:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյանին.

Հողամասի նպատակային և գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նախաձեռնել գործընթաց՝ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի նպատակային նշանակությունները՝ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակություն փոխադրելու համար:

3. Սույն որոշումից բխող անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հողամասի հատակագծերը կցվում են որոշմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	Դեմ՝ ... 0	Ձեռնպահ՝ ... 0
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՆԱԻՐԻ			
ԱՐՄԵՆՅԱՆ ԱՐՄԵՆ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ			
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱՄՍԱՐ			
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ			
ՂԶՐՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ			
ՄԵԼԻՔՅԱՆ ԲԱԲԻԿ			
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ			
ՆԻԿՈՅԱՆ ԱՐՄԵՆ			
ՇԱԲՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ			
ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ			
ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱԳՈՒՆ			
ՍԱՐԳՍՅԱՆ ԶԱՎԵՆ			
ՎԱՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 06
Քաղաք Մարալիկ